

ՀՀ Գեղարքունիքի մարզ

Սևան համայնք



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ՝  
2017ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նախաբան
2. Համայնքային բյուջե
  - 2.1 Եկամուտներ
  - 2.2 Ծախսեր
  - 2.3 Պարտք
  - 2.4 Հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր
3. Քաղաքաշինություն
4. Ներքին աուդիտ
5. Կոմունալ տնտեսություն
6. Ներդրումային և ընթացիկ ծրագրեր
7. Համագործակցություն միջազգային կառույցների հետ
8. Բարեգործական ծրագրեր
9. Սոցիալական ոլորտ
10. Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն
11. Մարզամշակութային կյանք
12. Ապակենտրոնացված համագործակցություն. Զբոսաշրջություն
13. Իրազեկման գործընթաց, էլեկտրոնային կառավարում

## Նախաբան

Հաշվետու՝ 2017թ-ը Սևան համայնքի կյանքում նշանավորվեց մի շարք աշխատանքներով, կենսական նշանակության խնդիրների լուծմամբ, ներդրումային ծրագրերի իրականացմամբ, բնակֆոնդի պահպանմանն ուղղված ծրագրերով, կյանքի որակի բարելավմանը նպաստող ձեռնարկների իրականացմամբ:

Տեղական իշխանությունն իր լիազորությունների շրջանակներում կատարեց համապատասխան քայլեր՝ նպաստելով համայնքի բնակիչների համար հարմարավետ պայմանների ստեղծմանը, աշխուժացնելով համայնք-մասնավոր հատված կապերը, նոր հարթության վրա դնելով համագործակցային և գործընկերային հարաբերությունները:

Արդյունքը գրանցված ցուցանիշներն են, բյուջեի կատարողականը, որոնք իրողություն դարձան համակարգված , ավագանու անդամների հետ նպատակային աշխատանքի շնորհիվ:

Նշեմ, որ աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են՝ հաշվի առնելով համայնքային առանձնահատկություններն ու առաջնահերթությունները, բյուջետային հնարավորությունները, առկա ռեսուրսները:

## Համայնքային բյուջե

Համայնքային յուրաքանչյուր ծրագրի և նախաձեռնության հիմքում բյուջետային գործընթացի համակարգված կազմակերպումն է, քանի որ համայնքի զարգացման և առաջընթացի առաջին ցուցիչը բյուջեի կատարողականն է:

Ինչպես ցույց տվեց նախորդ մեկ տարվա աշխատանքը, բյուջետային կարգապահությունը, բյուջեի նկատմամբ վերահսկողությունը և տնտեսման մեխանիզմների կիրառումը պետք է դարձնել մեր աշխատանքների հիմքը, որի շնորհիվ էլ հնարավոր է գրանցել հաջողություններ:

### Եկամուտներ

Համայնքի 2017թ. տարեկան բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 89.7%-ով: 592.7մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 531.6մլն. դրամ, թերակատարումը կազմել է 61.1 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 17.4մլն. դրամ եկամուտների գերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը 78.5մլն. դրամ է :

Նախորդ՝ 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն թերակատարվել է 4.4%-ով, կամ պակաս եկամուտները կազմել են 24.6մլն. դրամ:

2017թ. տարեկան բյուջեի վարչական մասը կատարվել 103.5%-ով / պլան՝ 488.7 մլն. դրամ, փաստացի՝ 506.0մլն. դրամ /: 2016թ. համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 155 մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2016թ. համեմատությամբ ավելացել են 3.2%- ով: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 112.2%-ով / պլան՝ 142.1 մլն. դրամ, փաստացի՝ 159.5մլն. դրամ /: Նախորդ՝ 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 33.7%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը ավելացել է 40.2 մլն. դրամով:

Վարչական բյուջեի եկամտատեսակների գծով նախորդ տարվա համեմատությամբ գերակատարվել են փոխադրամիջոցների / 15.5% /, շենք-շինությունների գույքահարկերը / 20.4% /, հողի հարկը պակասել է / 11.5% /. այս երեք եկամտատեսակները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել են 18.6մլն. դրամի չափով:

2017թ. ընթացքում սեփական եկամուտների պլանը թերակատարվել է հետևյալ եկամտատեսակների գծով՝ հողի հարկ, տեղական տուրքեր և վարձավճարներ, ընդհանուր առմամբ՝ 3.5մլն. դրամի չափով: Թերակատարումների հիմնական պատճառը բնակչության և իրավաբանական անձանց վճարումների մակարդակի նվազումն է, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքեր:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 24.6%-ով / ճշտված պլան՝ 104.0մլն. դրամ, փաստացի՝ 25.5մլն. դրամ /: Նախորդ՝ 2016թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտներն ավելացել են ընդամենը 9.6մլն. դրամով կամ 60.4%-ով:

## **Ծախսեր**

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2017թ. տարեկան բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 90.8%-ով: 493.3մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 448.1մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 45.2 / 10.1%/ մլն. դրամ:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 91.6%-ով (պլան՝ 492.0մլն. դրամ, փաստացի ծախս՝ 450.8մլն. դրամ), թերակատարումը կազմել է 41.2մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 48.8%-ը կամ 220.1մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 100.6 մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները (22.3%), 76.5մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր (17.0%):

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2017թ. տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով. կրթության ծախսերը՝ 91.7% , մշակույթի ծախսերը՝ 74.9%:

2016թ. համեմատությամբ 2017թ. վարչական բյուջեի ծախսերը պակաս են կատարվել 37.3մլն. դրամ կամ 8.3%-ի չափով:

2017թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 36.6%-ով (պլան՝ 145.3մլն. դրամ, փաստացի ծախս՝ 53.2 մլն. դրամ): Նախորդ՝ 2016թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով պակաս ծախսերը կազմել են 57.9մլն. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի ծախսերը պակասել են 47.9% -ով:

Ֆոնդային բյուջեի ծախսերի կատարումը 53.2մլն. դրամի չափով ապահովվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 30.4մլն. դրամի չափով ֆոնդային բյուջե հատկացման հաշվին, կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 57.1%-ը ապահովվել է ոչ կապիտալ՝ ընթացիկ եկամուտների հաշվին:

Համայնքի 2017թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 40.8մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար: 3.9մլն. դրամի չափով կատարվել են փողոցային լուսավորության ցանցի կառուցման ծախսեր:

Իրականացվել է շուրջ 11.8մլն. դրամի ասֆալտապատման աշխատանք:

## **Պարտքեր**

2017թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը եղել են 154.3 մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2017թ. ընթացքում մարվել է 90.1մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 75.2մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման, 3.9մլն. դրամ՝ նախագծային աշխատանքների մասով: Մարվել են նաև դատարանի վճռով տույժերը և պետական տուրքը:

2017թ. ընթացքում նոր պարտքեր չեն կուտակվել:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի պարտքը կազմում է 75.3մլն. դրամ, այդ թվում՝ 72.4 մլն. դրամը՝ համայնքի ֆոնդային բյուջեի գծով. հիմնականում 2014-2016թթ-ից տեղափոխված ասֆալտապատման աշխատանքների համար:

## **Հողի հարկ և գույքահարկ**

Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են: Այս ոլորտը կարիք ունի անընդհատ վերանայման՝ հարկման բազայում անհրաժեշտ փոփոխությունների ներառմամբ, համայնքում գործող ստորաբաժանումների հետ մշտական աշխատանքի միջոցով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենք- շինությունների համար գույքահարկի տարեկան պլանը նախատեսված է եղել 23.4մլն դրամ: Հավաքագրումը կազմել է 27.2մլն. դրամ / 120.4% /: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 9.1 մլն. դրամ: 2017թ-ին հավաքագրվել է 8.0 հազ. դրամ / 88.5% /, փոխադրամիջոցների գծով գույքահարկի վճարումը կատարվել է 115.6%-ով. պլանային 57.0մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 65.9մլն. դրամ:

Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 8.5մլն դրամի դիմաց կատարողականը կազմում է 7.5 մլն. դրամ:

Պետական տուրքի գծով նախատեսված 5.0 մլն. դրամի դիմաց մուտքագրվել է 5.6 մլն. դրամ / 111.6% /:

## **Քաղաքաշինություն**

Համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժնի կողմից տրամադրված ամփոփ տեղեկագիրն արձանագրում է.

2017թ-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին աճուրդային կարգով օտարվել է 7354.89 քմ մակերեսով հողատարածք, որից 6480.89քմ-ը՝ հասարակական կառուցապատման, 594.04քմ-ը՝ բնակելի կառուցապատման, 280քմ-ը՝ արտադրական նշանակության: Համայնքային բյուջե է մուտքագրվել 7.086.950.25 հազ. դրամ:

Շարունակվել է ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գործընթացը: Ընդունվել է համայնքի ղեկավարի 51 որոշում, համաձայն որի՝ օրինականացվել է ավտոտնակ, տաղավար, համայնքի տարածքում գտնվող վարչական շենքերում, բնակարաններում օրինականացվել են ինքնակամ կատարված ձևափոխման աշխատանքները: Այդ գործընթացների արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել 6.912.100 հազ. դրամ:

Ընդունվել է հասցեի տրամադրման 87 որոշում. համայնքի բյուջե է մուտքագրվել 87.000 դրամ:

Տրվել է ճարտարապետահատակագծային 34 առաջադրանք, 16 շինարարական թույլտվություն. համայնքային բյուջե է մուտքագրվել 153.200 դրամ:

Կայացվել է համայնքի ղեկավարի 32 որոշում հողի ուղղակի վաճառքի վերաբերյալ. համայնքային բյուջե է մուտքագրվել 7.815.261 դրամ:

2017թ. կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 6 գործ, որոնց մասով համայնքային բյուջե է մուտքագրվել 800.000 դրամ:

## **Ներքին աուդիտ**

2017թ-ի տարեկան ծրագրում պլանավորվել է իրականացնել ներքին աուդիտ Սևանի համայնքապետարանի բոլոր ստորաբաժանումներում, նաև համայնքապետարանի ենթակայությամբ գործող բոլոր ՀՈԱԿ-ներում:

09.01-19.01.2017թ-ին ներքին աուդիտ է իրականացվել ճարտարապետաշինարարական բաժնում:

30.01-24.02.2017թ.՝ «Կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ում

18.04-05.05.2017թ.՝ «Մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում

10.05-31.05.2017թ.՝ «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում

11.07.-21.07.2017թ.՝ «Թիվ 1 «Բողբոջ» մ/մ» ՀՈԱԿ-ում

01.08-15.08.2017թ.՝ «Թիվ 4 «Գալիք» մ/մ» ՀՈԱԿ-ում

28.08-12.09.2017թ.՝ «Գագարինի մ/մ» ՀՈԱԿ-ում

25.09-13.10.2017թ.՝ «Թիվ 3 «Հեքիաթ» մանկ» ՀՈԱԿ-ում

16.10-03.11.2017թ.՝ «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում

13.11-08.12.2017թ.՝ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնում

11.12-26.12.2017թ.՝ համայնքապետարանի կողմից իրականացվող գնումների մասով:

Վերոնշյալ միավորներում իրականացված ներքին աուդիտի արդյունքները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի նիստերում, միավորների ղեկավարներին տրվել են սխալների ուղղման , բացթողումների վերացման կարգադրություններ:

## **Կոմունալ տնտեսություն**

Համայնքի համար կենսական նշանակություն ունի կոմունալ տնտեսության բնականոն գործունեությունը: Մենք այս ոլորտում ունենք կոնկրետ նպատակներ՝ ունենալ այնպիսի կառույց, որը կհամակարգի կոմունալ տնտեսության ոլորտի գործառույթները՝ աղբահանումից մինչև կանաչապատում, սանմաքրման աշխատանքների կազմակերպումից մինչև լուսավորության ցանցի գործարկում, աղբահանության պայմանագրերի կնքման գործընթացից մինչև այդ ոլորտում տեխնիկական վերազինման ապահովում:

Անշուշտ, դժվարությունները ամեն քայլափոխի են. դրանք վերաբերում են և կազմակերպչական հարցերին, և կադրերին, և տեխնիկական վերազինմանն ու համապատասխան մշակույթի ձևավորմանը: Անցած ամիսների ընթացքում կոմունալ տնտեսության տեխնիկական վերանորոգվել է, ձեռք են բերվել անհրաժեշտ պահեստամասեր:

Ձմռան ամիսներին իրականացվող աշխատանքների առանցքում ձյան մաքրումն ու տեղափոխումն է, հետիոտների և ավտոմեքենաների համար անվտանգ , հարմարավետ ճանապարհների ապահովումը:

Ուշադրության կենտրոնում համայնքի ողջ տարածքն է՝ գլխավոր փողոցից մինչև երկրորդական փողոցներ, Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը, Գագարին գյուղը:

Մաքրմանը հաջորդել է ճանապարհների՝ ավագով մշակման գործընթացը, որի արդյունքում երթևեկության և հետիոտնի տեղաշարժի համար ապահովվել է բնականոն վիճակ: Ձուգահեռ մաքրվում են նաև մայթերը:

Գարնանը աշխատանքների ուղղվածությունը փոխվում է՝ առանցքում մնալով մաքրությունը: Էտման և սանիտարական հատման աշխատանքներին հաջորդում են ծառերի բների սպիտակեցման, կանաչ տարածքների խնամքի, ձևավորման աշխատանքները:

Քաղաքում ավելացել են նաև աղբամանները:

2017թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքային բյուջեից հատկացվել է 76 մլն դրամ:

Սևան համայնքում անցկացվել է 2 համաքաղաքային շաբաթօրյակ, համայնքն ակտիվորեն է մասնակցել «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում անցկացված համապետական 3 շաբաթօրյակներին:

Մասնակիցների թիվը եղել է մի քանի հազար, ներգարվել է անհրաժեշտ քանակով տեխնիկա:

ՀՈԱԿ\_ի աշխատանքների առանցքում են աղբահանության ոլորտի խնդիրները՝ պայմանագրերի կնքումից մինչև հավաքագրումների կանոնակարգում:

Սևան համայնքում 2016-2017թթ. աղբահանության պայմանագրերի կնքման և աղբահանության դիմաց վճարների հավաքագրումները ներկայացնում են հետևյալ պատկերը.

2016թ. աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրերի քանակը կազմել է 321, որից՝ Սևան քաղաքում՝ 280, ավիամերձ տարածքում՝ 41:

2017թ. աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրերի քանակը կազմում է 475, որից՝ Սևան քաղաքում՝ 307, ավիամերձ տարածքում՝ 168:

31.12.2017թ. դրությամբ հավաքագրումները կազմել են 31. 689.736դրամ, որից՝

- բնակչություն՝ 22.149.506 դրամ

- կազմակերպություններ՝ 9.540.230 դրամ

01.10.2016թ. դրությամբ ավիամերձ գոտում հավաքագրվել է 2.167.000 դրամ, իսկ 01.10.2017թ. դրությամբ՝ 3.151.500 դրամ:

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի՝ հուլիսի 1-ից աղբահանության վարձավճարների գանձումը՝ որպես տեղական տուրք, կատարվում է համայնքի կողմից:



## **Ներդրումային ծրագրեր**

Համայնքում իրականացվող բարեփոխումների, զարգացումների առանցքում կարևորվում են ներդրումային ծրագրերը: Այն, ինչը հնարավոր չէ կյանքի կոչել միայն տեղական բյուջեի միջոցներով, դառնում է իրատեսական կառավարության, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ:

Համայնքում նախորդ տարի ընթացել և այս տարի շարունակվելու են 3 ներդրումային ծրագրեր:

**Սևանի թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզի հիմնանորոգումը Տարածքային զարգացման հիմնադրամի և Սևան համայնքի հերթական համագործակցության արդյունքն է:**

215 մլն. դրամ արժողությամբ ծրագրի շրջանակներում /համայնքային ներդրումը՝ 15մլն. դրամ/ 1050քմ տարածք ունեցող մանկապարտեզը հիմնանորոգվում է ամբողջովին: Շինարարական աշխատանքներին հաջորդելու են կահավորումը, բակի բարեկարգումն ու խաղամիջոցների տեղադրումը:

Երեխաների համար ստեղծվելու է հարմարավետ և ապահով միջավայր, այս մանկապարտեզում իրականացվելու է նաև ներառական կրթություն:

### **Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի հիմնանորոգում**

Քաղաքին մշակութային կյանքում էլ շուտով կարձանագրվի դրական փոփոխություն, որը հիմնավորապես կփոխի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատում իրականացվող աշխատանքների որակը և այդ շենքում գործող կազմակերպությունների աշխատանքային պայմանները:

Մշակույթի պալատի շենքի ոչ բարվոք վիճակն արժանացավ կառավարության ուշադրությանը, և այն ներառվեց հիմնանորոգման ծրագրերում: ՀՀ պետական բյուջեից 295մլն. դրամ է հատկացվել ծրագրի իրականացման համար:

2016թ. մեկնարկել է աշխատանքների առաջին փուլը, որի համար հատկացվել է 41 մլն. դրամ, այս տարի շարունակվում է ծրագիրը, և երկրորդ փուլը կավարտվի տարեվերջին, որի համար տրամադրվել է 49 մլն. դրամ:

Հիմնանորոգման աշխատանքների արդյունքում հիմնանորոգվել են շենքի՝ գրադարանների կենտրոնացված համակարգի և արվեստի դպրոցի տեղակայման տարածքները. փոխվել են պատուհանները, անցկացվել է ջեռուցման համակարգ, վերանորոգվել է հատակը, կատարվել է ներքին հարդարման աշխատանքներ, տեղադրվել են ներքին դռներ, շենքի կենտրոնական տարածքում ևս իրականացվել են շինաշխատանքներ:

Մշակույթի պալատում հիմնանորոգման աշխատանքների երրորդ փուլը կմեկնարկի 2018թ. գարնանը:

**«Բժշկական կենտրոն» ՊՓԲԸ-ի մասնաշենքի կառուցում - Համաշխարհային բանկի վարկային միջոցներով՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակներում**

ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 815-Ն որոշմամբ «Սևանի հիվանդանոց» ՓԲԸ-ն և «Սևանի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն միաձուլման ձևով վերակազմակերպվելով՝ ստեղծվել է «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ պոլիկլինիկական մասնաշենքի հարևանությամբ կառուցվում է բժշկական կենտրոնի հիվանդանոցային նոր մասնաշենքը, որտեղ տեղակայվելու են կենտրոնի բոլոր հիվանդանոցային ծառայությունները:

Կենտրոնն ունենալու է դիագնոստիկ բաժանմունք, լաբորատորիա, մանկաբարձական ընդունարան, մանկաբուժական- թերապևտիկ, մանկաբարձական, վիրաբուժական բաժիններ, վերակենդանացման բաժանմունք, վիրահատարանային բլոկ, հիվանդասենյակներ / 40 մահճակալ /, դեղատուն, լվացքատուն և կենտրոնի համար անհրաժեշտ այլ սենյակներ:

Մասնաշենքի հարակից տարածքում կկառուցվեն նաև համապատասխան ենթակառուցվածքներ:

Բժշկական կենտրոնը սպասարկելու է Սևան համայնքի, տարածաշրջանի և հարակից համայնքների բնակչությանը: Զինված լինելով ժամանակակից սարքավորումներով և տեխնիկական հնարավորություններով՝ նպաստելու է տեղում և առավել մատչելի ձևով որակյալ բուժօգնության իրականացմանը, ֆինանսական ռեսուրսների խնայողությանը:

## Տանիքաշինություն

Անցած տարի համայնքում իրականացվեց տանիքաշինության ծրագիր հրատապ ծրագրերի շրջանակներում՝ կառավարության կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով /40մլն. դրամ/: Տանիքաշինության հերթական ծրագրում ներառված էին Ս. Սևանեցի փողոցի 7, 15, 21 շենքերը:

Տանիքների քանդման աշխատանքներին հաջորդել են տանիքի ծածկույթի՝ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից պատրաստման, օդափոխության բլոկների վրա պաշտպանիչ գլխադիրների տեղադրման, ձեռնահարկի լուսամուտների ծածկման, ջրհորդանի և ձեռնահարկի պատրաստման, մետաղական ճաղաշարի և փայտե կոնստրուկցիաների ներկման, երկաթբետոնե գոտու վնասված հատվածների վերակառուցման և նմանատիպ այլ աշխատանքներ: Տարեվերջին Սևանի ևս երեք բազմաբնակարան շենք ունեցավ ամուր և հուսալի տանիք:

## Համայնքապահպան և ընթացիկ ծրագրեր

2017թ. ընթացիկ աշխատանքների իրականացման առումով բավականին աշխատատար էր և արդյունավետ:

Ներկայացնեմ կատարված աշխատանքներն ըստ ոլորտների.

- Շենքերի, ջրագծերի, ջրահեռացման ցանցերի, կոյուղագծերի վերանորոգում

Գրիբոյեդով 10

Շահումյան 6 /մասնակի/

Նալբանդյան 28, 42, 61

Աբովյան 11, 15

Խաղաղության 4 /մասնակի/, 10, 12

Կարմիր բանակի 46

Նալբանդյան 25, 36 /մասնակի/, 65

Ս. Սևանեցի 22 /բնակիչների հետ համատեղ/, 15 /նոր ջրահեռացման ցանց/

Թիվ 3 միկրոթաղամասի բակային հատված

Նալբանդյան 61 շենքի մի հատված

Նաիրյան 1-ին նրբ. 8 շենք /նախկին գիշերօթիկ դպրոցի հարակից տարածք/

Հին հյուրանոցի հետնամասից դեպի Չարենց փողոց

Բակային տարածքների բարեկարգում

Աբովյան 5

Սայաթ-Նովա 8, 10, Նալբանդյան 28 շենքերի

Նալբանդյան 36, 38 շենքերի, Շինարարների 2

Շահումյան 2 շենք

Փողոցների փոսային նորոգում

Ավագ դպրոցից թիվ 3 հիմնական դպրոց տանող ճանապարհ

Համայնքապետարանի վարչական շենքի հետնամաս

Ուրենգոյ թաղամաս տանող ճանապարհ

3-րդ միկրոթաղամասից 4-րդ միկրոթաղամաս տանող ճանապարհ

1-ին միկրոթաղամասի մուտքի ճանապարհ

Նաիրյան 139 շենքի դիմաց

թիվ 4 մանկապարտեզին հարող ճանապարհ

Զրմուղ տանող ճանապարհ

Կարմիր բանակի 35 շենքի հարակից փողոց

Ասֆալտապատում

Նաիրյան- Աբովյան, Նաիրյան- Նալբանդյան փողոցների խաչմերուկի երկու հատվածներ

Ս. Սևանեցի փողոց

Տանհրճների վերանորոգում

Նալբանդյան 26

Ս. Սևանեցի 25

Սայաթ-Նովա 25, 4

Գործարանային 6

Շահումյան 18

Նաիրյան 139

Խաղաղության 2, 4

Ծխնեղույզի փոխում - Աբովյան 5

անձրևաջրատար - Սայաթ-Նովա 17

Բակային խաղամիջոցների տեղադրում

Շահումյան 18 շենքի բակ

Հասարակական գուգարանի կառուցում

Պետական քոլեջի հետնամաս

Վերելակների հիմնանորոգում

Խաղաղության 14

Գրիբոյեդով 7

Գիշերային լուսավորության ցանցի գործարկում

Հրազդան, Գեղամա, Սպանդարյան, Իսահակյան, Սայաթ-Նովա, Պարույր Սևակ փողոցներ

բակային հատվածներ

Լուսացույցներ

Նաիրյան-Աբովյան, Նաիրյան-Նալբանդյան փողոցների խաչմերուկներ

Մեծ ուշադրություն է դարձվել Գագարին գյուղին, որի արդյունքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Լուսավորության ցանց /12 կետ/ - Շիրազ փողոց

Ասֆալտապատում - Գայի 1, 2, 3 շենքերի հարակից տարածքներ

Կոյուղագիծ - Բաղրամյան 1, Գայի 3, Երիտասարդական 6

## Բարեգործական ծրագրեր

Սևան քաղաքում այս տարի սևանցի բարեգործների շնորհիվ կյանքի է կոչվել 3 նախաձեռնություն:

Մոսկվաբնակ երիտասարդ նկարիչ Խաչիկ Կարապետյանը Սևանի 5-րդ միկրոթաղամասում իր թաղամասի բնակիչներին նվիրեց մարզա և խաղահրապարակներ, որոնք կահավորվել են համապատասխան գույքով, խաղամիջոցներով:

Վոլգոգրադում բնակվող Գեղամ Վարդանյանի շնորհիվ Նաիրյան 4 շենքի բնակիչներն արդեն ունեն հիմնանորոգված մուտքեր, շենքի ճակատը բարեկարգվել է:

Չեխիայի Հանրապետությունում գործարարությամբ զբաղվող, «Ատլանտիս Դեվոլոպմենթ» ընկերության նախագահ Արամ Մարությանը, Սևան-Պրահա-Վինոր համագործակցության շրջանակներում, այս օրերին կառուցում և բարեկարգում է Պրահա-Վինոր այգին:

## Համագործակցություն միջազգային կառույցների հետ

Դեռևս երեք տարի առաջ Սևան համայնքի համար մեկնարկել է նս մեկ կարևոր՝ «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի կողմից: Ծրագրի առանցքում աղբահանության խնդիրների կարգավորումն է: Ծրագիրն ունի մի քանի բաղադրիչ և հեռահար նպատակներ, որն ընդգրկում է բնապահպանական և սոցիալական գործողություններ, նոր աղբավայրի շահագործում, մաքրության ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման նոր մեխանիզմներ, նոր և ժամանակակից տեխնիկայի, մասնագիտացված սարքավորումների տրամադրում:

Այս ծրագրի իրականացմամբ համայնքը հնարավորություն կունենա աղբահանության ոլորտում գրանցել լուրջ ձեռքբերումներ՝ և տեխնիկապես, և աշխատանքների որակական բարելավման առումներով:

2015թ. համայնքի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուգետոյի միջև ստորագրվել է մտադրությունների մասին Հուշագիր՝ «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում:

Ստորագրող կողմերն իրենց իրավասության շրջանակներում աջակցելու են քաղաքային լուսավորության համակարգում փորձնական-ցուցադրական նախագծի իրականացմանը՝ ընդհանուր նպատակ ունենալով էներգաարդյունավետության բարձրացման գործընթացի կայացումը:

Համաձայն Հուշագրի դրույթների՝ համաձայնություն է ձեռք բերվել Սևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, ֆինանսավորման ապահովման համար ստեղծել նպատակային վերականգնվող ֆոնդ:

Սևան քաղաքում ընտրված ցուցադրական փողոցն է Շահումյանը, որտեղ էլ տեղադրվել են լուսավորության լուսադիոդային նոր լուսատուներ:

Հետագայում կազմակերպվելու է ուսուցում նոր լուսատուներ տեղադրող պատասխանատու անձնակազմի համար:

Կարևորելով առաջավոր տեխնոլոգիաների և սարքավորումների կիրառումը քաղաքային լուսավորության համակարգի նախագծերում, ինչպես նաև էներգաարդյունավետության ներուժի իրականացմանն ուղղված նմանատիպ այլ նախագծերի ֆինանսավորման արդյունավետ նորարական սխեմաների մշակման ուղղությամբ փորձի կուտակման և նորացման անհրաժեշտությունը՝ երկու կողմերն էլ աշխատելու ենք ծրագրի իրականացման և հետագա շարունակականության ապահովման ուղղությամբ, որն առաջիկայում կներկայանա նոր բաղադրիչներով:

2016թ-ից Սևան համայնքը ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքներ» ծրագրում:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Համայնքի ղեկավարներ՝ հանուն տնտեսական զարգացման» քառամյա ծրագիրը մեկնարկել է 2017թ-ի հունվարին: Եվրամիության այս նոր նախաձեռնությունը նպատակ ունի աջակցելու Արևելյան գործընկերության երկրների համայնքներին՝ դառնալու տեղական մակարդակում տնտեսական զարգացման և աշխատատեղերի ստեղծման ակտիվ նախաձեռնող:

Սևան համայնքը մայիս ամսին միացել է «Համայնքի ղեկավարներ՝ հանուն տնտեսական զարգացման» ծրագրին, որին հաջորդել է մասնակցությունը «Համայնքի ղեկավարներ՝ հանուն տնտեսական զարգացման պիլոտային նախագծեր» դրամաշնորհային մրցույթին:

Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված դրամաշնորհային մրցույթի արդյունքներով Սևան համայնքը ճանաչվել է հաղթող /ի դեպ, հանրապետությունում միակը/:

2018-2019թթ-ին համայնքում իրականացվելու է «Նորարարության խթանման կայուն հարթակ» պիլոտային ծրագիրը, որը համայնքում գործարար միջավայրի բարելավման, տնտեսական զարգացման նոր աշխատատեղերի ստեղծման համար լուրջ և հիմնարար նախադրյալներ է ստեղծելու՝ ապահովելով դրանց շարունակականությունը բիզնես կենտրոնի գործունեության միջոցով:

Ինչպես ցույց է տալիս մեր աշխատանքային պրակտիկան, միջազգային կառույցների և կազմակերպությունների ներգրավումը տեղական ենթակառուցվածքների բարելավման ծրագրերում բավականին արդյունավետ է և կենսունակ:



## Սոցիալական ոլորտ

Բնակիչները իրենց հոգս ու խնդիրների լուծման համար առաջին հերթին դիմում են քաղաքապետարան: Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների, բնակիչների կողմից համայնքապետարան է հասցեագրվել 1099 դիմում, որոնք ներառում են տարբեր խնդիրներ, հարցեր և առաջարկներ՝ սոցիալականից մինչև արտոնությունների սահմանում, կենցաղային խնդիրներից մինչև հասցեի տրամադրում:

Կանոնակարգի համաձայն՝ համայնքի ղեկավարի մոտ ընդունելություն է նախատեսված յուրաքանչյուր հինգշաբթի, սակայն բնակիչների ընդունելություն եղել է շաբաթվա բոլոր օրերին:

2017թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին համայնքի ղեկավարի մոտ հերթագրվել և ընդունելության է մասնակցել 1420 քաղաքացի:

Սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների շարքում առանձնահատուկ կարևորություն ունեն երեքը՝ սոցիալական օգնության տրամադրում, բնակչության զբաղվածության խնդրի լուծում և սոցիալական պայմանների բարելավում: Վերջին 2 խնդրի լուծման համար մեր մասնակցությունը սահմանափակ է ոչ միայն լիազորությունների, այլ նաև հնարավորությունների բացակայության պատճառով: Այս ոլորտում սոցիալական լարվածության մեղմացմանը ուղղված աշխատանքների զգալի մասը ներառում է օգնության տրամադրումը:

Անցած տարի պարզևավճարներ են հատկացվել զոհված ազատամարտիկների մայրերին, կանանց, Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան հերոսամարտի մասնակիցներին, սևանցի լավագույն մարզիկներին:

Սոցիալապես անապահով անձանց և ընտանիքներին տրամադրվել է միանվագ ֆինանսական օգնություն 12 մլն. դրամի չափով:

Սոցիալական բեռը թեթևացնելու ծրագրերից մեկն էլ համայնքի մանկապարտեզներում ծնողական վարձավճարների գրոյացումն է: Նշեն, որ համայնքի մանկապարտեզներ են հաճախում 650 երեխա: Մինչ անվճար դառնալը, վարձավճարները մեկ երեխայի հաշվով ամսական կազմել է 6000-7000 դրամ, Գագարին գյուղում՝ 2000 դրամ:

## Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն

Համայնքում գործում է 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից մեկը՝ թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզը, հիմնանորոգման փուլում է:

2017թ-ի 10 ամիսներին /մարտ-դեկտեմբեր/ համայնքի բյուջեից սննդի ձեռքբերման համար 4 մանկապարտեզի հատկացվել է 17մլն. 680 հազ. դրամ, որը չի ներառում հացի համար նախատեսված գումարը: Չնայած համայնքային բյուջեում ներառվել է նաև հաց ձեռքբերելու համար 5.2 մլն. դրամ, սակայն մանկապարտեզներին բարեգործական հիմունքներով հաց մատակարարել է Սևանի հացի գործարանի տնօրեն Աշոտ Ավետիսյանը:

Մանկապարտեզների գործունեության նկատմամբ իրականացվում է մշտական վերահսկողություն, որը ներառում է երեխաների հաճախելիությունը, ռեժիմային պահերը, ուսուցման գործընթացը, սննդի բաշխման պրոցեսը, որակը, կալորիականությունը, հիգիենիկ պայմանների ապահովումը, երեխաների հետ տարվող անհատական աշխատանքը:

Մանկապարտեզներում աշխատողների թիվը 131 է, որից մանկավարժները 58-ն են: Մանկապարտեզ է հաճախում 650 երեխա:

Այս տարի մանկապարտեզներից դպրոց է հաճախել 239 երեխա:

5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար համայնքում թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզի հենքի վրա գործում է նախակրթարան, որտեղ հաճախում է 72 երեխա:

Սեպտեմբեր ամսին ԿԳ նախարարության կրթության տեսչության կողմից համայնքի մանկապարտեզներում և համայնքապետարանի ԿՄՍԵՀ բաժնում անցկացվել են տեսչական ստուգումներ:

Ստուգումների արդյունքում մանկապարտեզների գործունեությունը գնահատվել է դրական, արձանագրված որոշ թերությունների համար տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցը թեև գործում է վթարային շենքում, սակայն դպրոցում իրականացվող աշխատանքները ընթանում են բնականոն հունով: Այդ են վկայում անցած ուսումնական տարում դպրոցի սաների հաջողությունները հանրապետական և միջազգային տարբեր փառատոներում և մրցույթներում:

Դպրոցն ունի 33 աշխատակից:

Երաժշտական դպրոց է հաճախում 171 աշակերտ:

Քանի որ Վ. Այվազովսկու անվան արվեստի դպրոցը, գրադարանների կենտրոնացված համակարգը գործում են մշակույթի պալատի շենքում, ուստի դրանց գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է, աշխատակիցները գտնվում են հարկադիր պարապուրդում՝ պայմանավորված շենքում ընթացքող հիմնանորոգման մեծածավալ աշխատանքներով:

Վ. Այվազովսկու անվան արվեստի դպրոցում աշխատակիցների թիվը 26 է, հաճախել է 312 երեխա, Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգում

աշխատակիցների թիվը 14 է, մինչ հարկադիր պարապուրդի անցնելն ունեցել են 4500 ընթերցող

Մշակութային կենտրոնը ևս գործում է մշակույթի պալատում: Չնայած հարկադիր պարապուրդին՝ մշակույթի պալատում գործող պարային համույթները, դիոլահարների խումբը մշտապես մասնակցել են կազմակերպած բոլոր միջոցառումներին:

Մշակույթի կենտրոնում աշխատում է 15 հոգի, հաճախում է 170 երեխա:

## Մարզամշակութային կյանք

Իմ նախընտրական ծրագրում ներառված մասսայական սպորտի զարգացմանն ուղղված դրույթները տարվա ընթացքում ստացել են լուծում միջոցառումների տեսքով:

Իրականացվել են

- շախմատի մարզային որակավորման մրցաշար
- ծանրամարտի մարզային առաջնություն
- գնդապետ Վլ. Կարապետյանի հիշատակին նվիրված թաեքվոնդոյի մրցաշար
- համայնքի ղեկավարի գավաթի համար մինի ֆուտբոլի առաջնություն
- մարզական փառատոն

- Սևան-Էրեբունի համայնք համագործակցության շրջանակներում շախմատի միաժամանակյա մրցաշար գրոսմաստեր Զավեն Անդրիասյանի կողմից:

- Մարզադպրոցում տարին ամփոփվեց մեծարման հանդիսության կազմակերպմամբ:

Մարզական միջոցառումների շարքը լրացրել են «Լավագույն նախադպրոցական հիմնարկ» սպորտլանդիան, որի ընթացքում համայնքի մանկապարտեզները ցուցաբերեցին լավագույն մասնակցություն՝ արժանանալով երկրորդ և երրորդ մրցանակների, տեղի ունեցավ «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթը, որի համայնքային փուլը հաղթահարած լավագույն ընտանիքները մասնակցեցին մարզային փուլին:

Կարևորում են մարզադպրոցի գործունեությունն այս աշխատանքների իրականացման գործում, որովհետև արտադպրոցական այս կազմակերպությունը ոչ միայն դպրոցական տարիքի երեխաների պարապը լցնելու միջոց պետք է դառնա, այլ պատրաստի հանրապետական, միջազգային առաջնություններին մասնակից մարզիկներ, ձևավորվեն մարզական լավ ավանդույթներ, պահպանվի արդեն ստեղծվածը:

Մարզադպրոցի աշխատակիցների թիվը 30 է, հաճախում է 330 երեխա և պատանի:

Մասսայական սպորտի և առողջ ապրելակերպի զարգացմանը միտված ծրագրերից է նաև բակային, սպորտային հրապարակների կառուցումը և դրանց կահավորումը: Այս տարի նման լավագույն ձեռնարկի ականատեսը դարձանք: 5-րդ միկոթադամասում բարերար Խաչիկ Կարապետյանի միջոցներով կառուցված մարզա և խաղահրապարակները լրացնում են համայնքի տարբեր հատվածներում ունեցած մեր ռեսուրսը:

Այս բակը դարձավ նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ» ստուգատեսի մրցանակակիրներից:

«Լավագույն մարզական բակ» անվանակարգի 2-րդ մրցանակի հասցեատերը քաղաքի 5-րդ միկոթադամասում կառուցված բազմաֆունկցիոնալ մարզախաղահրապարակն էր:

Տոնացույցում նշված համապետական բոլոր օրերը և հիշատակի օրերը համայնքում նշվել են հավուր պատշաճի, որին մասնակից են դարձել համայնքի բնակիչները, համայնքում հյուրընկալվածները:

Հունվարի 28 - Հայոց բանակի օր - նշվել է Սևան և Էրեբունի համայնքների կողմից Լճաշենի գորամասում.

Կանանց միամսյակ - ցուցահանդեսների կազմակերպում, համերգային ծրագիր, գոհված ազատամարտիկների կանանց մայրերի, զինհաշմանդամ կանանց ընդունելություն.

Ապրիլի 24 - Եղեռնի օր - պսակադրման արարողակարգ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշախաչքարի մոտ, «Ցավի ծաղիկ» կոմպոզիցիայի կատարում.

Մայիսի 8 - Երկրապահի օր - հանդիպում երկրապահների հետ, պսակադրման արարողություն քաղաքային պանթեոնում.

Մայիսի 9 - Հաղթանակի օր - համաքաղաքային երթ, պսակադրման արարողակարգ քաղաքային պանթեոնում, համերգային բացօթյա ծրագիր.

Մայիսի 28 - Առաջին հանրապետության օր - համերգային ծրագիր, շուրջպար.

Հունիսի 1 - Երեխաների պաշտպանության օր - միջոցառում մանկական զբոսայգում.

Սեպտեմբերի 21 - Անկախության օր - համաքաղաքային երթ, պսակադրման արարողություն, համերգային ծրագիր:

Այս միջոցառումներին զուգահեռ հազեցած է եղել միջոցառումների ամառային օրակարգը:

Հուլիսի 3 - հանրային լողափերի տարեշրջանի բացում - մարզամշակութային միջոցառում.

Հուլիսի 15 - Սևանի թերակղզու մարզամշակութային միջոցառման անցկացում:

Ամառային 3 ամիսների ընթացքում՝ շաբաթ և կիրակի օրերին, կազմակերպվել են բացօթյա համերգներ, ցուցահանդեսներ, միջոցառումներ համայնքի տարբեր հատվածներում համայնքային կազմակերպությունների սաների մասնակցությամբ:

Ամանորին նվիրված միջոցառումը զուգորդվել է քաղաքի գլխավոր տոնաձառի լույսերի վառման արարողությամբ, զարդարվել է քաղաքի ողջ տարածքը:

## Զբոսաշրջություն

### Ապակենտրոնացված համագործակցություն

Սևանում ներհամայնքային ծրագրերին, աշխատանքներին զուգընթաց իրականացվում են գործնական-ընկերային ապակենտրոնացված հարաբերությունների զարգացմանը միտված ծրագրեր: 2015-ին համայնքը և Երևանի Էրեբունի վարչական շրջանը դարձան գործընկերներ՝ ստորագրելով համագործակցության հուշագիր, համաձայն որի՝ կազմակերպվելու են օրինակելի փորձի փոխանակումներ, փոխայցելություններ, ընդհանուր նշանակության խնդիրների քննարկումներ տեղական ինքնակառավարման, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի, զբոսաշրջության բնագավառներում:

Հուշագրի ստորագրմանը հաջորդել են մի շարք փոխայցելություններ, որոնք եղել են և ճանաչողական, և ուսուցողական, և մշակութային: 2017թ-ն էլ աչքի ընկավ ճանաչողական և փորձի փոխանակման այցերով, սոցիալական, կրթական, մարզական ծրագրերի իրականացմամբ:

2017թ. հոկտեմբերին ստորագրվեց Համաձայնագիր, որով երկու համայնքների համար սկսվեց համագործակցային մի նոր շրջափուլ: Համայնքների ղեկավարների փոխայցերին հետևել են Սևանի << Հեքիաթ>> և Երևանի <<Լապտերիկ>> մանկապարտեզներում անցկացված ուսանելի պարապմունքները:

Ապակենտրոնացված համագործակցության ոլորտում Սևան համայնքն ունի 13-ամյա փորձ Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի հետ՝ զբոսաշրջության, ֆրանսախոսության, առողջապահության ուղղություններով: 2017թ. դեկտեմբերին Սևանում ստորագրվեց 2017-2019թթ. Հուշագիր, որը ի լրումն էր 2010-ին ստորագրված համաձայնագրի:

Ֆրանսախոսության տարածման գործում արդեն ութերորդ տարին գործում է ֆրանսախոսության ուսուցման ծրագիրը, որն անցկացվում է ամռան ամիսներին: Դասընթացների ունկնդիրներն են աշակերտներն ու ուսանողները, երիտասարդ մասնագետները: Այն իրականացվում է Գրենոբլի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ՝ «Ֆրանս-ֆորմասիոն ինտերնասիոնալ» կազմակերպության դասընթացավարների միջոցով:

Համայնքը ևս ունի իր ներդրումը ծրագրի իրականացման գործում:

Մարտ-ապրիլ ամիսներին համայնքը միացավ ֆրոնկոֆոն ընտանիքին՝ իրականացնելով Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումներ՝ համայնքի կրթական, մշակութային, երաժշտական, ստեղծագործական հաստատությունների մասնակցությամբ:

Գրենոբլի քաղաքապետարանի և Գրենոբլ Գոսպել Սինգերս երգչախմբի ֆինանսավորմամբ Սևանի թիվ 2 «Բողբոջ», թիվ 3 «Հեքիաթ», թիվ 4 «Գալիք» մանկապարտեզներում և Ն. Դազարյանի անվան մարզադպրոցում տեղադրվել են արևային ջրատաքացուցիչներ:

Համայնքն ընդգրկված է արևային էներգիայի ծրագրում և առաջիկայում համայնքային կառույցներում և 20 առանձնատներում կտեղադրվեն արևային ջրատաքացուցիչներ:

2016-ի դեկտեմբեր ամսին շահագործման հանձնվեց Գագարինի մանկապարտեզի հիմնանորոգված բուժկետը:

Բուժկետի հիմնանորոգումն իրականացվել է «Բժշկական օգնություն և զարգացում» ֆրանսիական միջազգային կազմակերպության կողմից՝ Գրենոբլի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ:

Գագարինի բուժկետի լիարժեք գործարկման համար անհրաժեշտ էր համապատասխան կահավորում, որը «Բժշկական օգնություն և զարգացում» կազմակերպության կողմից ֆինանսավորվեց անցյալ տարի: Այս տարեսկզբին մանկապարտեզի տանիքին տեղադրվեց արևային ջրատաքացուցիչ:

Այս համագործակցության շրջանակներում է գործում նաև զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակը:

Գրասենյակի արդյունավետ աշխատանքի նպատակով ամռան ամիսներին Սևանի թերակղզու հրապարակում տեղակայվում է տեղեկատվական շարժական գրասենյակը:

Հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը Սևանի թերակղզում հյուրերին և զբոսաշրջիկներին դիմավորում է «Bari galust» ցուցանակը կրող տեղեկատվական գրասենյակը՝ սպասարկելով տեղեկատվության կարիք ունեցող բազմազգ այցելուներին:

35 երկրից 83.044 զբոսաշրջիկ է այցելել Սևանա թերակղզու ավտոկանգառի տարածք, որոնցից 7231-ն օգտվել է տեղեկատվական գրասենյակի ծառայություններից. 1064 զբոսաշրջիկ ստացել է ընդհանուր տեղեկատվություն, 6167-ին տրվել է զբոսաշրջային ինֆորմացիա:

Համայնքի զարգացման համար գերակա ուղղություն է զբոսաշրջությունը, և ցանկացած ծրագիր կամ ձեռնարկ, որն ուղղված է զբոսաշրջային գործի զարգացմանը, համայնքի համար ունի կենսական նշանակություն: Համայնքը ներառված է IRAPA հարթակի աշխատանքներում, որը միավորում է հայաստանյան և ֆրանսիական 8 համայնք: Հայաստանում համագործակցող կողմերն են Գեղարքունիքի մարզը, Սևան, Վարդենիս և Գորիս համայնքները:

Զբոսաշրջության գործով զբաղվողների համար դեկտեմբերին այդ ծրագրի շրջանակներում անցկացվել են 1-ին բուժօգնության դասընթացներ: Այս տարի քաղաքում և թերակղզում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, շուտով կամփոփվեն զբոսաշրջության կրեատիվ դրամաշնորհային ծրագրի արդյունքները: Երիտասարդների կողմից ներկայացված մեկը մյուսից ինքնատիպ գաղափարները՝ ծրագրերի տեսքով, արդեն քննարկվել են և լավագույնները կստանան դրամաշնորհ դրանք կյանքի կոչելու համար: Նախապատվությունը տրվել է նրանց, ովքեր աշխատել են թիմով, առավել մեծ տարածք են ընդգրկել, չկրկնվող են և տարածաշրջանի արժևորման խնդիր են լուծել:

Ապակենտրոնացված համագործակցության ճանապարհին 2016թ-ին ստորագրված Սևան-Պրահա-Վինոր համագործակցության Հուշագիրը դարձել է ծրագրային փաստաթուղթ:

Հունիսին Չեխիայի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ընթացքում Պրահա-Վինորում ձեռքբերված նախնական պայմանավորվածության արդյունքում անցյալ տարի Սևանի 2-րդ և 3-րդ միկրոթաղամասերի միջնամասում, համայնքի և բարերար Արամ Մարությանի համագործակցությամբ, կառուցվում է Պրահա-Վինոր անվանմամբ այգին, որտեղ իրականացվող աշխատանքների զգալի մասը կատարվել է, և այս տարի այգին կհանձնվի շահագործման:

Այգին դառնալու է միջոցառումների և հանգստի կազմակերպման լավագույն վայր տեղացիներին և զբոսաշրջիկներին համար: Միաժամանակ լուծվելու են այդ հատվածի կանաչապատման, ծառատնկման հարցերը, բնապահպանական որոշ խնդիրներ:

Սևանի զարգացման գործում կարևորում ենք ապակենտրոնացված կենսունակ համագործակցությունը, ինչպես նաև համայնք - մասնավոր հատված համագործակցությունը, միջազգային ծրագրերում ներգրավվելը, որոնց շնորհիվ հնարավոր է գրանցել լուրջ առաջընթաց, ինչպես նաև տնտեսական զարգացում:

## **Իրազեկման գործընթաց, էլեկտրոնային կառավարում**

Թափանցիկ աշխատառճի ձևավորման ճանապարհին իրականացվող ծրագրերի մեջ առանձնանում են համայնքապետարանում գործող «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը, որն առավել ամբողջական և համակարգված է դարձնում իրականացվող աշխատանքները: Համայնք-մարզպետարան-կառավարություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակը թույլ է տալիս աշխատանքները դարձնել առավել արդյունավետ, առավել սեղմ ժամկետում փոխանցել համապատասխան տեղեկատվությունը:

Աշխատանքների արդյունավետության նպատակով, մասնագիտական որակավորման և հմտությունների ապահովման համար աշխատակազմի համայնքային ծառայողներն անցել են ատեստավորում, մասնակցել որակավորման և վերապատրաստման դասընթացների:

Համայնքն ունի իր պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը, որը թարմացվում է մշտապես :